«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

<ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>

Հոդված 1.

1. <Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին> 1999 թվականի ապրիլի 28-ի ՀՕ-302 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի.

1) վերնագրի և առաջին պարբերության 1-ին մասի <շինարարական արտադրության> բառերը փոխարինել <շինարարական արտադրության կազմակերպման և կահավորման, նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, սանիտարահիգիենիկ և շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված պահանջների> բառերով,

2) առաջին պարբերության 1-ին մասի <վտանգավոր չեն մարդկանց> բառերը փոխարինել <վտանգավոր չեն մարդկանց (այդ թվում շինարարական հրապարակում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական անձնակազմի առողջության պահպանման) բառերով,

3) առաջին պարբերության 2-րդ մասի <հիսնապատիկի չափով> բառերը փոխարինել <հինգհարյուրապատիկի չափով> բառերով,

4) առաջին պարբերությունը լրացներ նոր՝ 3-րդ մասով, հետևյալ բովանդակությամբ. ,

5) երկրորդ պարբերության 2-րդ մասի <երեքհարյուրապատիկի չափով> բառերը փոխարինել <հազարհինգհարյուրապատիկի չափով> բառերով,

6) երկրորդ պարբերությունը լրացներ նոր՝ 3-րդ մասով, հետևյալ բովանդակությամբ. և կառուցապատողի լիցենզիայի կասեցում,

7) երրորդ պարբերության 2-րդ մասի <չորսհարյուրապատիկի չափով> բառերը փոխարինել <երեքհազարապատիկի չափով> բառերով,

8) երրորդ պարբերությունը լրացնել նոր՝ 3-րդ մասով, հետևյալ բովանդակությամբ. և կառուցապատողի լիցենզիայի կասեցում,

9) երրորդ պարբերությունից հետո լրացնել նոր՝ չորրորդ պարբերություն, հետևյալ բովանդակությամբ. <Շինարարական արտադրության կազմակերպման նախագծի բացակայությունը, շինարարական հրապարակի ոչ բավարար կազմակերպումը և կահավորումը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով.

-նույն արարքի կրկին կատարելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի չափով>:

Հոդված 2. Սույն Օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 81.1-րդ հոդվածի.

1) առաջին մասի երկրորդ պարբերության <հարյուրհիսնապատիկի չափով> բառերը փոխարինել <հինգհարյուրապատիկի չափով> բառերով,

2) երկրորդ մասի երկրորդ պարբերության <հարյուրապատիկի չափով> և <երեքհարյուրապատիկի չափով> բառերը համապատասխանաբար փոխարինել <հազարապատիկի չափով> և <երկուհազարապատիկի չափով>

բառերով:

Հոդված 2.

1. 157[4]-րդ հոդվածի.

1) վերնագրի և առաջին պարբերության 1-ին մասի <պահանջների խախտումներով> բառերը փոխարինել <պահանջների խախտումներով, այդ թվում առանց շինարարական արտադրության կազմակերպման նախագծի> բառերով, <մշակված քաղաքաշինական փաստաթղթերի> բառերը փոխարինել <քաղաքաշինական փաստաթղթեր մշակելը, դրանց> բառերով, <ինչպես նաև> բառերը փոխարինել <կամ> բառով, <նախագծային աշխատանքների կապալառուի կողմից> բառերը հանել:

2) առաջին պարբերության 1-ին մասի <վտանգավոր չեն մարդկանց> բառերը փոխարինել <վտանգավոր չեն մարդկանց (այդ թվում շինարարական հրապարակում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական անձնակազմի առողջության պահպանման) բառերով,

3) առաջին պարբերության 2-րդ մասի <հիսնապատիկի չափով> բառերը փոխարինել <հազարապատիկի չափով> բառերով,

4) առաջին պարբերությունը լրացներ նոր՝ 3-րդ մասով, հետևյալ բովանդակությամբ. ,

5) երկրորդ պարբերության 2-րդ մասի <երկուհարյուրապատիկի չափով> բառերը փոխարինել <հինգհազարապատիկի չափով և նախագծային ու փորձագիտական կազմակերպությունների լիցենզիաների կասեցում> բառերով,

6) երկրորդ պարբերությունը լրացներ նոր՝ 3-րդ մասով, հետևյալ բովանդակությամբ. ,

7) երրորդ պարբերության 1-ին մասի <տեխնիկական վթարների> բառերը փոխարինել <տեխնիկական վթարների և մարդկային զոհերի> բառերով

8) երրորդ պարբերության 2-րդ մասի <չորսհարյուրապատիկի չափով> բառերը փոխարինել <քսանհազարապատիկի չափով և նախագծային ու փորձագիտական կազմակերպությունների լիցենզիաների կասեցում>:

Հոդված 3.

1. Օրենսգրքի 157[8] -րդ հոդվածի.

1) վերնագրի և առաջին պարբերության 1-ին մասի <շինարարական արտադրության կամ ընդունման նորմերի> բառերը փոխարինել

<շինարարական արտադրության կազմակերպման և կահավորման, նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, սանիտարահիգիենիկ և բնապահպանական պահանջների> բառերով,

2) առաջին պարբերության 1-ին մասի <վտանգավոր չեն մարդկանց> բառերը փոխարինել <վտանգավոր չեն մարդկանց (այդ թվում շինարարական հրապարակում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական անձնակազմի առողջության պահպանման) բառերով,

3) առաջին պարբերության 2-րդ մասի <հիսնապատիկի չափով> բառերը փոխարինել <հինգհարյուրապատիկի չափով> բառերով,

4) առաջին պարբերությունը լրացներ նոր՝ 3-րդ մասով, հետևյալ բովանդակությամբ. ,

5) երկրորդ պարբերության 2-րդ մասի <երեքհարյուրապատիկի չափով> բառերը փոխարինել <հազարհինգհարյուրապատիկի չափով> բառերով,

6) երկրորդ պարբերությունը լրացներ նոր՝ 3-րդ մասով, հետևյալ բովանդակությամբ. և կառուցապատողի լիցենզիայի կասեցում,

7) երրորդ պարբերության 2-րդ մասի <չորսհարյուրապատիկի չափով> բառերը փոխարինել <երեքհազարապատիկի չափով> բառերով,

8) երրորդ պարբերությունը լրացնել նոր՝ 3-րդ մասով, հետևյալ բովանդակությամբ. և կառուցապատողի լիցենզիայի կասեցում,

9) երրորդ պարբերությունից հետո լրացնել նոր՝ չորրորդ պարբերություն, հետևյալ բովանդակությամբ. <Շինարարական արտադրության կազմակերպման նախագծի բացակայությունը, շինարարական հրապարակի ոչ բավարար կազմակերպումը և կահավորումը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով.

-նույն արարքի կրկին կատարելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի չափով>:

Հոդված 4.

1. Օրենսգրքի 157[15]-րդ հոդվածի.

1) Վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ. <Երևան քաղաքի վարչական սահմաններում կառուցապատողների կողմից շրջակա միջավայրի վրա շինարարական աշխատանքների ազդեցության նվազեցման, շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում փողոցների երթևեկության, հետիոտնային անցումների և հետիոտների անվտանգության, կառուցապատվող օբյեկտներում շինարարական արտադրության՝ այդ թվում շինարարական հրապարակների կազմակերպման, կահավորման,

տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված պահանջները չապահովելը>,

2) 1-ին կետի 2-րդ մասի <երեսնապատիկից մինչև հիսնապատիկի չափով> բառերը փոխարինել <հինգհարյուրապատիկի չափով> բառերով,

3) 2-րդ կետի 1-ի մասի <հետիոտնի անցումների> բառերը փոխարինել <հետիոտնային անցումների և հետիոտնի> բառերով,

4) 2-րդ կետի 2-րդ մասի <հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով> բառերը փոխարինել <հազարապատիկի չափով> բառերով,

5) 3-րդ կետի 1-ին մասի <շինարարական հրապարակների տարանջատման ու սանիտարական վիճակի ապահովման պայմանները չպահպանելը> բառերը փոխարինել <շինարարական արտադրության՝ այդ թվում շինարարական հրապարակների կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական պահանջները չապահովելը> բառերով,

6) 3-րդ կետի 2-րդ մասի <յոթանասունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով> բառերը փոխարինել <երկուհազարապատիկի չափով> բառերով

7) 3-րդ կետից հետո լրացնել նոր՝ 4-րդ կետ հետևյալ բովանդակությամբ.<Սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով նշված արարքները կրկին կատարելն առաջացնում է կառուցապատողի լիցենզիայի կասեցում>:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից: